

**ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԸՍՏ «2019 ԹՎԱԿԱՆԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ»**

Պաշտոնական վիճակագրության իրագործման հիմքը վիճակագրական ծրագրերն են, որոնք ներառում են երկրի տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական և բնապահպանական իրավիճակի դիտարկման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվությունը՝ հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը և ծախսերի արդյունավետությունը: Վիճակագրական ծրագրով նախատեսված գործունեության ուղղություններն ու միջոցառումները հաշվի են առնում երկրի ցուցանիշների համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին, երկարաժամկետ միջակայքում միտումները բացահայտելու նպատակով ապահովում են դրանց հնարավոր կայուն պարբերականությունը և տարեկան կտրվածքով պաշտոնական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը: Վիճակագրական ծրագրերը մշակվում են պաշտոնական վիճակագրության օգտագործողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա:

ՀՀ պաշտոնական վիճակագրության բոլոր գործառույթների ծրագրավորումը խարսխվել է պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների (ընդունված ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 47-րդ նստաշրջանում՝ Ժնև, 15.04.1992թ., ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի՝ 14.04.1994թ. և ՄԱԿ-ի Գլխավոր Վեհաժողովի կողմից՝ Նյու-Յորք, 29.01.2014թ., Բանաձև 68/261) և դրանց հիման վրա մշակված վիճակագրության միջազգային չափանիշների ու ստանդարտների վրա («Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրք», ընդունված Վիճակագրական ծրագրային կոմիտեի կողմից 24.02.2005թ.-ին, Եվրոպական վիճակագրական համակարգի կոմիտեի կողմից՝ 28.09.2011թ. և 16.11.2017թ.):

ՀՀ վիճակագրական կոմիտեն (ԱՐՄՍՏԱՏ) «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի 14, 15 և 16-րդ հոդվածների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության 2019-2023 թվականների հնգամյա վիճակագրական ծրագրով»¹ (Հնգամյա ծրագիր) սահմանված պահանջներին համապատասխան, իրականացրել է «2019 թվականի վիճակագրական ծրագիրը»² (Տարեկան ծրագիր): Ստորև ներկայացվում են 2019 թվականին կատարված միջոցառումներն ըստ Տարեկան ծրագրի համապատասխան հատվածների:

Ազգային հաշիվներ, համախառն ներքին արդյունքի ցուցանիշ(ՀՆԱ): Իրականացված աշխատանքների մասով ամսական պարբերականությամբ հաշվարկվել է տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ), եռամսյակային պարբերականությամբ՝ ՀՆԱ-ի ցուցանիշը օպերատիվ և նախնական տվյալներով, ՀՆԱ-ի ցուցանիշը մեկ շնչի հաշվով, ինչպես նաև տարեկան պարբերականությամբ՝ ՀՆԱ-ի ցուցանիշի հաշվարկներն ընթացիկ և նախորդ տարվա գներով (արտադրական եղանակով՝ տնտեսական գործունեության տեսակներով և ծախսային եղանակով՝ ըստ ծախսային բաղադրիչների):

Արդյունաբերության վիճակագրություն: Արդիականացվել է արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների վիճակագրական դաշտը և դրանով պայմանավորված՝ շարունակվել են մշտադիտարկման մեջ ընդգրկված նոր կազմակերպությունների գործունեության տեսակների վերածածկագրման աշխատանքները: Ընտրանքային դիտարկման մեխանիզմների կիրառմանը զուգահեռ, առանձին արտադրությունների գծով (ըստ ցածր առածգականությամբ արտադրանքների արտադրության բազային ցուցանիշների) շարունակվել է իրականացվել չդիտարկվող (չհաշվառվող) դաշտի գնահատումը՝ օգտագործելով տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների արդյունքները:

¹ Տես՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2018թ. հոկտեմբերի 31-ի թիվ 61-Ն որոշում, ՀՀԳՏ 2018.11.15/28(631) Հոդ.255

² Տես՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2018թ. նոյեմբերի 30-ի թիվ 70-Ն որոշում, ՀՀԳՏ 2018.12.26/32(635).1.Հոդ.286.14

ԱՐՄՍՍՏԱՏ-ի և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից հավաքված և ամփոփված այլ տեղեկատվության հիման վրա, վերջինիս կողմից կազմվել է ՀՀ 2018թ. էներգահաշվեկշիռը, որը կիրառարակվի «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թվականի հունվար-դեկտեմբերին» տեղեկատվական ամսական զեկույցում:

Գյուղատնտեսության վիճակագրություն: Սույն ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքման կարգի հետ կապված հարաբերությունները «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքին համապատասխանեցնելու անհրաժեշտությունից ելնելով պատրաստվել են գործող մի շարք վիճակագրական հաշվետվական ձևերի և դրանց լրացման հրահանգների, ամփոփ հաշվետվությունների, տեղեկանքների նոր տարբերակներ, որոնք հաստատվել են ՀՀ վիճակագրության պետական խորհրդի (ՀՀ ՎՊԽ) համապատասխան որոշումներով:

Իրականացվել են հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում անցկացված գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի համատարած հաշվառման արդյունքների ընտրանքային ստուգաճշտումներ: Ստացված տվյալներն օգտագործվել են համատարած հաշվառման արդյունքում հավաքված տվյալների ճշգրտման համար:

2019թ.-ի ընթացքում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանն աջակցություն է ցուցաբերվել գյուղատնտեսության ոլորտում վարչական ռեգիստրների վարման շուրջ տարվող աշխատանքներում:

«Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT ծրագրի «Գյուղատնտեսության վիճակագրություն» բաղադրիչի շրջանակում պատրաստվել է Եվրամիության կարգավորումների պահանջներին համապատասխան /հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները/ գյուղատնտեսության կառուցվածքային հետազոտությունների համար անհրաժեշտ հարցաթերթի նախագիծը և իրականացվել է հարցաթերթի դաշտային փորձարկումը (գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման դաշտի վիճակագիրների կողմից, ընտրանքում ընդգրկված տնտեսություններում):

ՀՀ-ում իրականացվող ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) «Գյուղատնտեսական ինտեգրված հետազոտություններ» /AGRIS/ ծրագրի շրջանակում աշխատանքներ են տարվել ՀՀ Արմավիրի, Կոտայքի, Շիրակի և Տավուշի մարզերի անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների հարցման մեկնարկային (գույքագրման), եռամսյակային և տարեկան թվայնացված հարցաթերթերի դաշտային փորձաքննության փուլերի, հարցման ընթացքում ծագած խնդիրների բացահայտման, դրանց խմբավորման և լուծման ուղղությամբ: Այդ մարզերի հարցազրուցավարների և սուպերվայզերների, ինչպես նաև հետքվոտերների հետ իրականացվել է գյուղատնտեսական ինտեգրված հետազոտությունները համակարգչի կիրառմամբ անհատական հարցազրույց վարելու համար նախատեսված (CAPI) ծրագրի SUSO հավելվածի ուսուցում, ընտրանքային դիտարկման դաշտի ձևավորում և այլն:

Հավաքվել, մշակվել և ամփոփվել են պարենային ապահովության վիճակագրությանն առնչվող պարենի մատչելիության, աղքատության և պարենի օգտագործման վերաբերյալ ցուցանիշները: Կազմվել են 2018թ. առանձին ապրանքախմբերի ազգային պարենային հաշվեկշիռները:

Շինարարության վիճակագրություն: 2019թ.-ի ընթացքում հաշվարկվել են հանրապետությունում իրականացված շինարարության հիմնական ցուցանիշներն ամսական պարբերականությամբ և ըստ մարզերի՝ եռամսյակային կտրվածքով, իրականացվել է անհատական բնակելի շենքերի և մասնավոր շինարարական օբյեկտների դիտարկում, պարբերաբար անցկացվող շրջագայությունների միջոցով ընդլայնվել է բնակչության միջոցների հաշվին կառուցված նոր շինարարական օբյեկտների ցանկը (համացանկը):

ՀՀ ՎՊԽ 12.04.2019թ. թիվ 11-Ա անհատական որոշմամբ հաստատվել են «ՀՀ վիճակագրական կոմիտեի Երևան քաղաքի շինարարության դիտարկման դաշտում ընդգրկված

վիճակագիրների աշխատանքների իրականացման կարգը» և «Անհատական բնակելի շենքերի ամսական դիտարկման թերթիկը»: Իրականացվել են ՀՀ տարածքում կառուցապատում իրականացնելու թույլտվությունների և Երևան քաղաքում կառուցապատման ընթացքում գտնվող օբյեկտների վերաբերյալ տեղեկատվության ստացման և ամփոփման աշխատանքներ:

Տրանսպորտի վիճակագրություն: Ոլորտի վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքման կարգի հետ կապված հարաբերությունները «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքին համապատասխանեցնելու, դրանցում առկա ոչ արդիական ցուցանիշների փոփոխման, հստակեցնելու և պարզեցնելու, ինչպես նաև ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու անհրաժեշտությունից ելնելով փոփոխության են ենթարկվել 11 վիճակագրական հաշվետվությունների ձևեր:

Առևտրի և այլ ծառայությունների վիճակագրություն: Սույն ոլորտի վիճակագրական տեղեկատվության ամբողջականացման նպատակով սպառողական ապրանքների շուկաներում պարբերաբար անց են կացվել ընտրանքային դիտարկումներ ըստ ապրանքային խմբերի (պարենային, ոչ պարենային), վաճառատեղերի քանակի, մեկ վաճառատեղի մեկ օրվա առևտրի շրջանառության ծավալի:

Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը նվազեցնելու նպատակով և հիմք ընդունելով ոլորտի մշտադիտարկումների դաշտում գտնվող վերոնշյալների տնտեսական գործունեության արդյունքում ձևավորված միջին ամսական շրջանառությունների վերաբերյալ տեղեկատվությունը, հաշվարկվել են միջին ամսական շրջանառությունների շեմեր, որոնց կիրառմամբ հնարավոր է դարձել մշտադիտարկումներում ընդգրկվածների մի մասին ազատել նշված ոլորտի վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունների ներկայացումից: Արդյունքում՝ այն ռեսպոնդենտների տնտեսական գործունեության արդյունքում ձևավորված շրջանառությունը, որոնցից դադարեցվել է նշված ոլորտների վիճակագրական հաշվետվությունների ուղղակի հավաքումը, համալրվել է տարեկան պարբերականությամբ Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) կողմից ԱՐՄՍՍՍՍ-ն ակտիվ տնտեսավարողների տնտեսական գործունեության տարեկան արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացմամբ:

Աշխատանքներ են իրականացվել վարչական ռեգիստրների կատարելագործման և ոլորտի վիճակագրական հաշվառման դաշտի արդիականացման ուղղությամբ:

Գների վիճակագրություն: Գործող մեթոդաբանության համաձայն, յուրաքանչյուր ամիս հաշվարկվել են գների ինդեքսները: Ազգային հաշիվներում, որպես դեֆլյատորներ օգտագործման նպատակով կատարվել է տնտեսության առանձին ճյուղերի գների ինդեքսների լրացուցիչ հաշվարկ՝ ամսական, եռամսյակային (ամիսը նախորդ տարվա միջինի, նախորդ եռամսյակի, նախորդ տարվա համապատասխան եռամսյակի համեմատ), տարեկան կտրվածքներով:

Միջազգային համադրումների ծրագրի (ՄՀԾ) 2017թ. տվյալներով նոր՝ Գլոբալ փուլի աշխատանքների շրջանակներում շարունակվել են սպառողական շուկայի ապրանքների և ծառայությունների (շուրջ 2 200 տեսակների համար) իրականացված գնադիտարկումների լրացուցիչ այցելությունների միջոցով արձանագրված գների ճշգրտումները: ՄՀԾ շրջանակներում նմանատիպ գործողություններ են իրականացվել նաև ներդրումային ապրանքների, շինարարության բաղադրամասերի գների գծով: Գնային տեղեկատվության հավաքագրում է իրականացվել ոչ շուկայական ծառայությունների և բնակֆոնդի համապատասխան ծառայությունների համար: Գնային տեղեկատվությունը սահմանված աշխատանքային ժամանակացույցի և ձևաչափի համապատասխան ներկայացվել է ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտե:

Կազմակերպությունների տնտեսական գործունեություն: 2019թ.-ին սույն ոլորտի վիճակագրական աշխատանքների կատարման համար տվյալների հավաքումն իրականացվել է ընտրանքային եղանակով վիճակագրական հաշվետվություններ ներկայացնողների ցանկում ընդգրկված կազմակերպություններից հաշվետվությունների հավաքման միջոցով: Կազմակերպությունների ընտրանքը կատարվել է ԱՐՄՍՍՍՍ-ի բիզնես-ռեգիստրի գործող կազմակերպությունների արդիականացված բազայից: Ոչ ֆինանսական կազմակերպություններն ըստ աշխատողների թվաքանակի բաժանվել են 2 խմբի՝ խոշոր ու միջին կազմակերպություններ և

փոքր ու գերփոքր կազմակերպություններ: 854 խոշոր և միջին համարվող կազմակերպություններ համատարած ընդգրկվել են վիճակագրական հաշվետվություններ ներկայացնողների ցանկում, իսկ փոքր և գերփոքր կազմակերպություններից (գլխավոր համակցությունից) ընտրվել են նախորդ տարում 100 մլն. և ավելի շրջանառություն ունեցող 3 158 կազմակերպություն: Մնացածի մասով (որոնց ընդամենը շրջանառությունը ընդհանուրի մեջ կազմել է մոտ 10%) տրվել է գնահատական՝ ՊԵԿ-ի կողմից ԱՐՄՍՍՍՏ-ին տրամադրված տեղեկատվության հիման վրա:

Հարկաբյուջեբային և ֆինանսական հարվածներ: 2019թ.-ին ամսական պարբերականությամբ Ֆինանսների նախարարությունից (ՖՆ) հավաքվել են վիճակագրական տեղեկություններ պետական բյուջեի նախնական ամփոփ ցուցանիշները, իսկ եռամսյակային պարբերականությամբ՝ տեղեկատվություն պետական և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի փաստացի կատարողականի վերաբերյալ:

2019թ.-ին ՖՆ-ից ստացվել են ամսական պարբերականությամբ վիճակագրական տեղեկություններ ՀՀ պետական պարտքի (ներքին և արտաքին) վերաբերյալ ըստ վարկառուների, պարտքի գործիքների և ռեզիդենտության, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ՝ ըստ պարտքի գործիքների և պետական պարտքի գծով կատարված գործառնությունների:

Կենտրոնական բանկից (ԿԲ) ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ հավաքվել են վիճակագրական տեղեկություններ դրամավարկային ու բանկային համակարգի, ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայի, գրավատների, վճարահաշվարկային կազմակերպությունների, արժույթային դիլերների, փոխանակման կետերի և պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի գործունեության վիճակագրական հիմնական ցուցանիշների վերաբերյալ:

ԱՄՀ-ի Տվյալների տարածման հատուկ ստանդարտին (SSՀՍ) ՀՀ-ն անդամակցության շրջանակում, ՖՆ-ից ստացվել են ՀՀ կենտրոնական և ընդհանուր կառավարության, արտաքին պետական պարտքի, իսկ ԿԲ-ից՝ կենտրոնական բանկի և բանկային համակարգի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշների և միջազգային պահուստների վերաբերյալ ամփոփ տվյալները և տեղադրվել ԱՐՄՍՍՍՏ-ի կողմից ՏՏՀՍ ձևաչափով վարվող Հայաստանի Ազգային ամփոփ տվյալների էջում:

Արտաքին հարված: Արտաքին և փոխադարձ առևտրի, վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի «Ապրանքներ և ծառայություններ» հոդվածների գծով ցուցանիշների հաշվարկման համար օգտագործվել են վարչական ռեգիստրների՝ մասնավորապես ՊԵԿ-ի կողմից ստացվող բեռնամաքսային հայտարարագրերի, ֆիզիկական անձանց կողմից կատարված առևտրի և «Ապրանքների փոխադրման հաշվառման վիճակագրական ձևի» տվյալների բազաները, ԿԲ-ից ստացված տեղեկանքները:

Կազմվել են 2018թ. IV եռամսյակի և տարեկան, ինչպես նաև 2019թ. I, II և III եռամսյակների ՀՀ վճարային հաշվեկշիռների ընթացիկ հաշիվների «Ապրանքներ և ծառայություններ» հոդվածները: Հավաքվել են ամսական պարբերականությամբ՝ տվյալներ արտաքին և փոխադարձ առևտրի, մասնավորապես բեռնամաքսային հայտարարագրերի, ֆիզիկական անձանց կողմից կատարվող առևտրի և «Ապրանքների փոխադրման հաշվառման վիճակագրական ձևի», բնական գազի արտահանման ու ներմուծման և էլեկտրաէներգիայի արտահանման ու ներմուծման ծավալների վերաբերյալ, եռամսյակային պարբերականությամբ՝ տվյալներ միջազգային ծառայությունների առևտրի (կապ, զբոսաշրջություն, տրանսպորտ, մշակույթ և այլն), օտարերկրյա ներդրումների (ուղղակի, պորտֆելային և այլ՝ ներառյալ միջազգային վարկերը) և ոչ ֆինանսական կազմակերպությունների արտաքին պարտավորությունների սպասարկման վերաբերյալ:

ԱՄՀ ՏՏՀՍ-ին անդամակցությամբ պայմանավորված, շարունակվել է վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային և արտաքին պարտքի դիրքերի, ապրանքների արտաքին և փոխադարձ առևտրի մեթատվյալների վերանայումը և դրանց գետեղումը Հայաստանի Ազգային ամփոփ տվյալների էջում:

ԱՐՄՍՍՍՍ-ի պաշտոնական կայքում, ամսական կտրվածքով տեղադրվել են ՀՀ արտաքին առևտրի ցուցանիշների շարժընթացը, ՀՀ վճարային հաշվեկշռի, ՀՀ միջազգային ներդրումային դիրքի և ՀՀ համախառն արտաքին պարտքի, իսկ 2016թ.-ից՝ նաև միջազգային զբոսաշրջության ցուցանիշների շարքերը:

Համաձայն ԱՐՄՍՍՍՍ-ի և Եվրոստատի միջև կնքված արտաքին առևտրի տվյալների փոխանակման Համաձայնագրի, ամսական կտրվածքով, արտաքին առևտրի տվյալները 10-նիշ դասակարգմամբ, համապատասխան ձևաչափով, ներկայացվել են Եվրոստատին, ինչպես նաև ՄԱԿ-ի վիճակագրական բաժին:

ԵԱՏՄ-ին ՀՀ-ի անդամակցությամբ պայմանավորված, համապատասխան ձևաչափով, ամսական կտրվածքով, արտաքին և փոխադարձ առևտրի տվյալները 10-նիշ դասակարգմամբ ներկայացվել են վերոնշյալ կառույցին:

ՀՀ արտաքին առևտրի տվյալներն ամսական կտրվածքով հնտեգրացված թղթակցության համակարգի (ԻԹՀ) միջոցով տեղադրվել են ԱՄՀ կայքում:

Ժողովրդագրություն: Շարունակվել են աշխատանքները բնական շարժի, միգրացիայի, բնակչության սեռատարիքային կազմի հաշվարկի, ծնելիության և մահացության ցուցանիշները բնութագրող ելքային աղյուսակների ստացման համակարգի լրամշակման ուղղությամբ:

2019թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղապետարանների կողմից անցկացված ՀՀ գյուղական բնակչության սեռատարիքային կազմի հաշվառման արդյունքներով ամփոփվել են բնակավայրերում տնային տնտեսությունների քանակի, մշտական բնակչության թվաքանակի, առկա բնակչության առանձին տարիքների և տարիքային խմբերի, տնային տնտեսությունների զբաղված անդամների՝ գյուղատնտեսական և այլ ոլորտներում զբաղվածների թվաքանակի վերաբերյալ ցուցանիշները:

Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի (ՔԿԱԳ) ռեգիստրի միասնական էլեկտրոնային կառավարման համակարգից ամսական պարբերականությամբ ստացված ծննդյան, մահվան, ամուսնության, ամուսնալուծության վերաբերյալ գրանցումների մշակման արդյունքում ստացվել են ամենամսյա օպերատիվ տվյալներ՝ ՀՀ մարզերի և տարածաշրջանների բաշխմամբ: Տվյալների վիճակագրական մշակման գործընթացում կատարվել են բազային ցուցանիշների տրամաբանական ստուգման, ճշգրտման և խմբագրման ամենամսյա աշխատանքներ:

Բնակչության բնական շարժի ամսական և մեխանիկական շարժը բնութագրող եռամսյակային օպերատիվ ցուցանիշների, ինչպես նաև միգրացիայի գնահատված ցուցանիշների հիման վրա, եռամսյակային պարբերականությամբ, հաշվարկվել են 2019թ. մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշները՝ հունվարի 1-ի, ապրիլի 1-ի, հուլիսի 1-ի և հոկտեմբերի 1-ի դրությամբ՝ ՀՀ մարզերի, տարածաշրջանների, քաղաքային, գյուղական, ինչպես նաև ք. Երևանի վարչական շրջանների բաշխմամբ:

ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի, ԵԱՏՀ-ի, Եվրոստատի, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) և մի շարք այլ միջազգային կազմակերպությունների հայցերով պատրաստվել և ներկայացվել է տեղեկատվություն՝ բնակչության թվաքանակի, սեռատարիքային կազմի, ծնելիության, մահացության և դրա պատճառների, ամուսնության և ամուսնալուծության, կյանքի սպասվող տևողության, ինչպես նաև միգրացիոն տեղաշարժերի և դրանց առանձին բնութագրիչների մասին:

Փորձնական մարդահամար: 2019թ. հոկտեմբերի 3-ից մինչև 12-ը ներառյալ ՀՀ Շիրակի մարզի ք. Արթիկում և ՀՀ Կոտայքի մարզի Ակունք, Արամուս, Կամարիս և Մայակովսկի գյուղերում անց է կացվել ՀՀ փորձնական մարդահամար: Փորձնական մարդահամարի նպատակն էր՝ ՀՀ 2020թ. մարդահամարի հարցաթերթի, այլ մեթոդաբանական գործիքների և կազմակերպչական գործառույթների փորձարկումը ՀՀ մշտական բնակչության թվաքանակի 1%-ը ներառող բնակչության շրջանում: Հաշվարարները հանդերձված են եղել անձը հաստատող հատուկ փաստաթղթերով և շարժական համակարգիչներով (պլանշետներով):

Սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրություն: 2019թ.-ի ընթացքում փոփոխություններ են իրականացվել սույն ոլորտին առնչվող որոշ վիճակագրական հաշվետվական ձևերում: Աշխատանքներ են իրականացվել համապատասխան ոլորտային գերատեսչությունների հետ և գրեթե բոլոր վիճակագրական հաշվետվական ձևերի ցուցանիշներն արդիականացվել են, իսկ այն ցուցանիշները, որոնք հավաքվել են և չեն հրապարակվել, հանվել են՝ թեթևացնելով ռեսպոնդենտների ծանրաբեռնվածությունը:

Տնային տնտեսությունների հետազոտություն: ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ, 2019թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 30-ն անց է կացվել տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն (SSԿԱՀ)՝ CAPI տարբերակով: Այն իրագործելու նպատակով ԱԱԴԾ-ի (Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարության ծրագրի իրականացում) դրամաշնորհային միջոցներով ձեռք են բերվել պլանշետներ, հրավիրվել են CAPI-ի բարձրակարգ մասնագետներ՝ պլանշետներում հարցաթերթի և օրագրի ներդրումն ապահովելու նպատակով: Թղթային տարբերակից անցումը CAPI-ի տարբերակին զգալիորեն բարելավել է հավաքված տվյալների որակը, քանի որ գործնականում բացառվել է հարցաթերթի լրացման փուլում սխալ պատասխան մուտքագրելու հնարավորությունը:

Տնային տնտեսությունների ընտրանքի չափը մեկ տարվա համար կազմել է 5 184 տնային տնտեսություն: Ապահովվել են մարզային կտրվածքով նվազագույն ներայացուցչական տվյալներ: Յուրաքանչյուր ամիս հետազոտվել է 432 տնային տնտեսություն: Տնային տնտեսությունների ընտրանքում ընդգրկումն իրականացվել է ամենամսյա ռոտացիայի (փոխարինման) եղանակով: Հավաքված տվյալների ամփոփումն ըստ եկամուտների, ծախսերի, հիմնական սննդամթերքի սպառման, աղքատության մակարդակի, բնակչության սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների, կատարվել է տարեկան կտրվածքով:

Հետազոտության արդյունքների հիման վրա կատարելագործվել են 2020թ.-ի SSԿԱՀ-ի գործիքները՝ հարցաթերթն ու օրագիրը:

Իրականացվել են 2018թ.-ի SSԿԱՀ-ի տվյալների բազայի տրամաբանական ստուգման և կազմավորման աշխատանքներ: Ձևավորված բազայի անվանազերծված տարբերակը հետագա վերլուծության համար տրամադրվել է Համաշխարհային բանկին ու Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

ԱՐՄՍՍՍՍ-ի պաշտոնական կայքում տեղադրված 2004-2017թթ. տնային տնտեսությունների և դրանց անդամների մակարդակով SSԿԱՀ-ի անվանազերծված միկրոֆայլերը համալրվել են 2018թ.-ի տվյալներով:

Եռամսյակային պարբերականությամբ հաշվարկվել է նվազագույն սպառողական գամբյուղը՝ միջին ընթացիկ գներով (երկու տարբերակով):

Բիզնես ռեգիստր: Բիզնես ռեգիստրի տեղեկատվության անուղղակի աղբյուր հանդիսացող վարչական ռեգիստրներից, այն է՝ Արդարադատության նախարարության (ԱՆ) իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից և ՊԵԿ-ից, սահմանված կարգով, ստացվել են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ տվյալներ, որոնք մշակվել և համադրվել են բիզնես ռեգիստրի տեղեկատվության ստուգաճշտման, ամբողջականացման, և արդիականացման նպատակներով:

Բիզնես ռեգիստրի արդիականացման նպատակով ԱՐՄՍՍՍ-ի կառուցվածքային ստորաբաժանումներից ստացվել, համադրվել և ամփոփվել են վերջիններիս վիճակագրական մշտադիտարկումներում առկա իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ տվյալների շտեմարանները:

Բիզնես ռեգիստրի ուղղակի (բիզնես ռեգիստրի հարցաթերթ) և անուղղակի աղբյուրներից ստացված տեղեկատվության հիման վրա արդիականացվել է թվով 26 322 իրավաբանական անձանց և 53 025 անհատ ձեռնարկատերերի 2018թ. տնտեսական գործունեության տարեկան արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը (գտնվելու վայրի, գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակների, աշխատողների թվաքանակի, շրջանառության և այլնի

վերաբերյալ տվյալներ): Իրականացվել է էլեկտրոնային եղանակով վիճակագրական տեղեկատվություն ներկայացնողների տեղեկատվական շտեմարանի վարումն ու արդիականացումը:

Վիճակագրական դասակարգիչներ:Նոր տնտեսական գործունեության տեսակների առաջացմամբ պայմանավորված «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի» 5-րդ՝ ազգային նիշի մակարդակում իրականացվել են համապատասխան փոփոխություններ ու լրացումներ: Դրանց վերաբերյալ ամփոփվել են շահագրգիռ մարմինների առաջարկություններն ու դիտողությունները: Դասակարգչի լրամշակված տարբերակը հաստատվել է Էկոնոմիկայի նախարարի հրամանով, որը կիրառության մեջ է 2020թ. հունվարի 1-ից:

Իրականացվել են Եվրոպական համայնքի կողմից մշակված ԱԴՏԳՏ-2008 վերանայված տարբերակի հիման վրա մշակված ազգային առանձնահատկություններն արտահայտող «Արդյունաբերական արտադրանքի դասակարգում ըստ գործունեության տեսակների (9-նիշ մակարդակ)» դասակարգչի վերանայման և ներդրման աջակցման հետ կապված աշխատանքներ:

«Տնտեսության ինստիտուցիոնալ հատվածների դասակարգչում» իրականացվել են փոփոխություններ ու լրացումներ «Ազգային հաշիվների համակարգ-2008» միջազգային ստանդարտի (ԱՀՀ-2008) մեթոդաբանական առաջարկություններին համապատասխան, ինչպես նաև հաշվի առնելով բյուջետային համակարգի մասին ազգային օրենսդրության առանձնահատկությունները:

Ցուցաբերվել է մեթոդաբանական աջակցություն ԱՐՄՍՍՍՍ-ի ստորաբաժանումների ԱՀՀ-2008-ի մեթոդաբանական առաջարկությունների հիման վրա մշակված «Հիմնական ֆոնդերի վիճակագրական դասակարգչի» ազգային տարբերակի ներդրման, ինչպես նաև վիճակագրական աշխատանքներում այլ վիճակագրական դասակարգիչների կիրառման ուղղությամբ: ԱՀՀ-2008-ի մեթոդաբանական առաջարկություններին համապատասխան, ինչպես նաև ազգային առանձնահատկությունները հաշվի առնելով մշակվել է «Ֆինանսական ակտիվների դասակարգիչը», որը ներկայացվել է Էկոնոմիկայի նախարարությանը՝ որպես նորմատիվ իրավական ակտ սահմանված կարգով հաստատման և գրանցման գործընթացի կազմակերպման նպատակով:

Որակի կառավարում: ԱՐՄՍՍՍՍ-ում սկսվել են Եվրամիության Միասնական ինտեգրված մեթատվյալների կառուցվածքի (SIMS) ներդրման աշխատանքները: Մշակվել է համապատասխան Excel ձևաչափը (հայերեն և անգլերեն), որը ներառում է SIMS-ի հասկացություններն ու սահմանումները և այն կկիրառվի վիճակագրական արտադրանքների համար SIMS-ի հենքով որակի հաշվետվությունների կազմման նպատակով: SIMS-ի փորձարկման նպատակով ընտրվել են 5 վիճակագրական արտադրանքներ՝ Աշխատուժի վիճակագրություն, Սպառողական գների ինդեքս, Ազգային հաշիվներ, Մասնագիտական կրթություն, Տրանսպորտի վիճակագրություն: Իրականացվել է SIMS-ի հենքով որակի հաշվետվության կազմման փորձնական աշխատանքը «Ճանապարհային տրանսպորտ» (հայերեն և անգլերեն) և «Սպառողական գների ինդեքս» (հայերեն) վիճակագրական արտադրանքների համար: Աշխատուժի վիճակագրություն, Ազգային հաշիվներ, Մասնագիտական կրթություն վիճակագրական արտադրանքների որակի հաշվետվությունների կազմման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Մշակվել է ԱՐՄՍՍՍՍ-ի «Մեթատվյալների մշակման ծրագիր» ռազմավարական փաստաթուղթը (անգլերեն և հայերեն): Մեթատվյալների կառավարման հասկացությունը վերաբերում է վիճակագրական տվյալների բովանդակությանը, կառուցվածքին, նախագծմանը և մշակմանը՝ նախապատրաստական փուլից մինչև վիճակագրական տարածման փուլը:

Իրականացվել է Եվրոպական վիճակագրական համակարգի որակի ապահովման շրջանակի (ԵՎՀ ՈԱՇ) 2019թ. հրատարակության (տարբերակ 2.0) անգլերենից հայերեն թարգմանությունը, որը հաջորդում է Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի (ԵՎ ՓՕ) 2017թ. վերանայմանը և համաձայնեցվում դրա հետ: Որակի ընդհանուր կառավարման սկզբունքների հետ միասին ԵՎ ՓՕ-ն ու ԵՎՀ ՈԱՇ-ը կազմում են ԵՎՀ որակի ընդհանուր շրջանակը, որի հիման վրա մշակվում, արտադրվում և տարածվում է բարձր որակի եվրոպական վիճակագրությունը:

Վիճակագրական հեղափոխություններ: 2019թ.-ի ընթացքում ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորման հաշվին իրականացվել են Տարեկան ծրագրով նախատեսված 3 վիճակագրական հետազոտությունները՝ «Հացահատիկային մշակաբույսերի՝ ցորենի և գարու բերքահավաքի ընթացքում առաջացած կորուստներ», «Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտություն» և «Տնային տնտեսություններում իրականացվող աշխատուժի հետազոտություն»:

Տեղեկատվահրատարակչական գործունեություն: 2019թ.-ին ԱՐՄՍՍՍՍ-ի կողմից հրատարակվել է 58 անուն վիճակագրական հրատարակում կամ նախորդ տարվա համեմատ 7.4%-ով ավել՝ ներառյալ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը (հայերեն և ռուսերեն), 15 անուն վիճակագրական ժողովածու և Ծրագրից դուրս՝ «Վիճակագրություն դպրոցականների համար, 2019» վիճակագրական նոր ժողովածուն, ինչպես նաև «Ազգային ամփոփ տվյալների էջը»՝ երկրի համապատասխան տվյալները) և 19 անուն (հաճախականությունը հաշվի առած՝ 67) վիճակագրական տեղեկագրեր ու շինարարությանն առնչվող 1 անուն վիճակագրական նոր տեղեկագիր, 20 անուն մամուլի հաղորդագրություն (հաճախականությունը հաշվի առած՝ 49, որից ամսական պարբերականությամբ՝ 24, եռամսյակային՝ 8 և տարեկան՝ 17):

Ըստ Google Analytics հաշվիչի գրանցումների, 2019թ.-ի ընթացքում ԱՐՄՍՍՍՍ-ի պաշտոնական կայքում գրանցվել է 225 645 դիտում, ինչը 45 658-ով (6.9 %) պակաս է 2018թ.-ի համապատասխան ժամանակահատվածի համեմատ և ընթերցվել է 846 930 էջ, իսկ www.armstatbank.am կայքում՝ 18 947 դիտում, ինչը 5 570-ով (41.6%) ավել է 2018թ.-ի համապատասխան ժամանակահատվածի համեմատ և ընթերցվել է 94 721 էջ:

ԱՐՄՍՍՍՍ-ի բաց գրադարանում 2019թ. տարեվերջին առկա է եղել 13 055 անուն վիճակագրական գրականություն, որից 332-ը ստացվել է 2019թ.-ի ընթացքում: ԱՐՄՍՍՍՍ-ի գրադարանի գրանցամատյանում 2019թ. ընթացքում գրանցվել է 19 այցելություն, այդ թվում գիտական՝ 16.0% և միջազգային կազմակերպություններից՝ 6.0%, պետական մարմիններից՝ 20.0%, ինչպես նաև կրթական ոլորտից՝ 58.0%:

Տարեկան ծրագրի կախարման ապահովման գծով որոշ հիմնարար միջոցառումների վերծանում: «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի դրույթներին համապատասխան 2019թ.-ի ընթացքում շարունակվել է վիճակագրությանը վերաբերող իրավական դաշտի բարելավմանն ուղղված աշխատանքների իրականացումը: Այդ նպատակով հրավիրվել է ՀՀ ՎՊԻՍ 16 նիստ և արդյունքում ընդունվել թվով 117 որոշում, դրանցից 61-ը՝ նորմատիվ որոշում և 56-ն՝ անհատական որոշում: Ընդունված որոշումներով հաստատվել են վիճակագրական դիտարկման փաստաթղթեր, փոփոխություններ են կատարվել գործող վիճակագրական փաստաթղթերում, ուժը կորցրած են ճանաչվել արդիականությունը կորցրած վիճակագրական փաստաթղթեր, ինչպես նաև կարգավորվել են վիճակագրական բնագավառի այլ հարցեր:

Առաջնորդվելով «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի հոդված 11-ով սահմանված դրույթներով, ՀՀ վարչապետի 2019թ. սեպտեմբերի 13-ի թիվ 1293-Ա որոշմամբ հաստատվել է Պաշտոնական վիճակագրություն օգտագործողների հանրային խորհրդի (Հանրային խորհուրդ) անհատական կազմը: 2019թ հոկտեմբերի 8-ին տեղի է ունեցել Հանրային խորհրդի առաջին նիստը, իսկ 2019թ. հոկտեմբերի 30-ին՝ հերթական նիստը, որոնց վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը գետեղված է ԱՐՄՍՍՍՍ-ի պաշտոնական կայքում:

Ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018թ. հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 741-Լ որոշմամբ հաստատված կանոնադրության 16-րդ կետի 3-րդ ենթակետով, ելնելով Համաշխարհային բանկի «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» TFOA4543 դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ԱՐՄՍՍՍՍ-ի հետ իրականացվող ԹՎԻՆԻՆԳ գործընկերության 1.1.3. բաղադրիչի աշխատանքների կատարումն ապահովելու անհրաժեշտությունից, ԱՐՄՍՍՍՍ-ի նախագահի 23.04 2019թ. թիվ

36-Ա հրամանով ստեղծվել է ԹՎինինգ գործընկերության 1.1.3. բաղադրիչի աշխատանքների շրջանակում պաշտոնական վիճակագրության առանձին ոլորտների ռազմավարական և մեթոդաբանական խորհրդատվական աջակցության և «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի արդյունավետ կիրարկումն ապահովելու նպատակով իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքային խումբ: Նույն հրամանով հաստատվել է աշխատանքային խմբի անհատական կազմը և աշխատանքային խմբի աշխատակարգը: Աշխատանքային խումբն իր գործառույթներն իրականացնում է, համագործակցելով ԹՎինինգ գործընկերության և դրա շրջանակներում ներառված գործողությունների իրականացման գործընթացում ընդգրկված բոլոր փորձագետների և կազմակերպությունների հետ, իր աշխատանքները կազմակերպում և անց է կացնում նիստերի միջոցով:

Տարածքային (ռեգիոնալ) վիճակագրության զարգացում: ԱՐՄՍՍԱՏ-ի պաշտոնական կայքի «Տարածքային վիճակագրություն» բաժնի «Հայաստան» ենթաբաժնում քարտեզային և աղյուսակային պատկերմամբ զետեղվել է ՀՀ մարզերի և ք. Երևանի 2014-2018թթ.-ի վերաբերյալ եռալեզու վիճակագրական ամփոփ տեղեկատվություն, իսկ «Հրապարակումներ» ենթաբաժնում՝ «Ատլաս. ՀՀ-ն մարզերով և ք. Երևանով, 2019» եռալեզու վիճակագրական տեղեկագիրը, «ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2019» երկլեզու վիճակագրական ժողովածուն, ինչպես նաև 11 էլեկտրոնային հրապարակումներ՝ ՀՀ յուրաքանչյուր մարզի և Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ:

Տեղեկատվական ռեսուրսների կառավարում և տեխնոլոգիաների ներդրում:

2019թ.-ի ընթացքում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ աշխատանքներն իրականացվել են ՀՀ ՎՊԽ կողմից 2003թ.-ին ընդունված «Միասնական տեղեկատվական վիճակագրական համակարգի զարգացման հայեցակարգի» ու տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության առջև դրված գործառույթներից բխող հիմնախնդիրներին համապատասխան:

Միջազգային վիճակագրական համագործակցություն: ԱՐՄՍՍԱՏ-ը շարունակել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և ազգային վիճակագրական ծառայությունների հետ, նրանցից ստացել տեխնիկական, ֆինանսական, խորհրդատվական և աշխատանքային օգնություն:

Իրականացվել են բանակցություններ և քննարկումներ վիճակագրության տարբեր բնագավառներում հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ:

2019թ.-ի ընթացքում միջազգային համագործակցության շրջանակում ԱՐՄՍՍԱՏ-ի կողմից լույս է ընծայվել 6 մամուլի հաղորդագրություն:

2019թ.-ի ընթացքում ԱՐՄՍՍԱՏ-ի կողմից լրացվել և նախատեսված պարբերականությամբ ԱՊՀ Միջպետական վիճակագրական կոմիտեին տրամադրվել են 156 վիճակագրական հարցաթերթեր, որոնցից՝ 21-ը՝ ամսական, 25-ը՝ եռամսյակային և 110-ը՝ տարեկան պարբերականությամբ, իսկ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի վիճակագրության դեպարտամենտին՝ 122 վիճակագրական հարցաթերթեր որոնցից՝ 27-ը՝ ամսական, 15-ը՝ եռամսյակային և 80-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Գործառույթակազմակերպչական գործունեություն: Հիմք ընդունելով ՀՀ առաջին փոխվարչապետի 2019թ. հունվարի 11-ի թիվ 3 որոշումը՝ քաղաքացիական ծառայության պաշտոնների գնահատման նոր համակարգին անցնելու հետ կապված կատարվել են համապատասխան աշխատանքներ՝ ԱՐՄՍՍԱՏ-ի քաղաքացիական ծառայության պաշտոնների գնահատման, դասակարգման, անվանումների, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի նախագծերի կազմման, պաշտոնների ընդհանուր համակարգում տեղակայման, իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև տվյալ քաղաքացիական ծառայության պաշտոնը զբաղեցնելու համար քաղաքացիական ծառայողին մասնագիտական գիտելիքների ու կոմպետենցիաների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ սահմանելու ուղղությամբ:

ԱՐՄՍՍԱՏ-ի նախագահի համապատասխան հրամաններով հաստատվել են կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները:

ԱՐՄՍՍԱՏ-ի գլխավոր քարտուղարի 08.08.2019թ. թիվ 36-Լ հրամանով հաստատվել է գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի և կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայության պաշտոնները զբաղեցնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների շրջանակն ու աղբյուրները սահմանող իրավական ակտերի ցանկը:

ԱՐՄՍՍԱՏ-ի գլխավոր քարտուղարի 14.10.2019թ. թիվ 456-Ա հրամանով հաստատվել է ԱՐՄՍՍԱՏ-ի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների անվանացանկը, իսկ 14.10.2019թ. թիվ 457-Ա հրամանով հաստատվել է աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների նոր չափանիշներով գնահատված և դասակարգված քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը:

Ուսումնարտադրական պրակտիկա է կազմակերպվել ՀՀ կառավարման ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի թվով 75 ուսանողների համար:

ԱՐՄՍՍԱՏ-ի **ընդհանուր փաստաթղթաշրջանառությունը** 2019թ.-ի ընթացքում կազմել է 9 198 միավոր (2018թ.՝ 9 024 միավորի դիմաց):

ԱՐՄՍՍԱՏ-ի նախագահի կողմից 2019թ.-ի ընթացքում վերահսկողություն է սահմանվել 628 (2018թ.՝ 286 միավոր) փաստաթղթի (օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ժամկետ պարունակող փաստաթղթեր) կատարումն ապահովելու համար, որոնք կատարվել են սահմանված ժամկետներում: